ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արգինե Նահապետյան

Հոդվածում պարզաբանվում է հասարակական կազմակերպությունների դերը ժողովրդավարության զարգացման գործընթացում: Առանձնացվել են ժողովրդավարության հիմնական ատրիբուտները. լեգիտիմ կառավարություն, կառավարության թափանցիկ և հաշվետու գործունեություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանություն:

Վերջին ժամանակներս բավական կարևորվում է հասարակական կազմակերպությունների դերը ժողովրդավարության զարգացման գործընթացում: Նախ պարզենք, թե ինչ է ժողովրդավարությունը: Գոյություն ունեն ժողովրդավարության տարբեր սահմանումներ: Օրինակ. հարգանք մարդու իրավունքների հանդեպ, հարգանք փոքրամասնությունների հանդեպ, խոսքի ազատություն, անկախ օրենսդրական մարմին, անկախ դատական մարմին, ազգային հարստության արդար բաշխում, կրթության իրավունք բոլորի համար, և կառավարության պարտավորվածություն՝ կառավարելու սահմանադրական ճանապարհներով *(Ա.Օյովե),* կամ չհամաձայնվելու և դրանից չվախենալու իրավունք *(Փրոնք)* [1, p. 27]: Ռ.Արչերը նշում է նաև ժողովրդավարության երկու հիմնական ատրիբուտներ, որոնք են բազմակարծությունն ու հաշվետու լինելը [1, pp. 28-29]: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել ժողովրդավարության հիմնական ատրիբուտները. լեգիտիմ կառավարություն, կառավարության գործունեության թափանցիկություն և հաշվետվություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքների պաշտպանություն: Սույն հոդվածում կանդրադառնանք ՀԿ-ների՝ տվյալ ատրիբուտների ապահովման գործում ունեցած դերին, կուսումնասիրենք նաև ՀԿ-ների դերը շուկայական տնտեսության զարգացման մեջ, քանի որ ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն հասկացությունները սերտորեն փոխկապված են:

ՀԿ-ների կարևորագույն դերն է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների միջոցով կառավարության լեգիտիմություն ապահովելը: Այս գործընթացում ՀԿ-ները պետք է իրազեկեն հասարակությանը ընտրու-

թյունների գործընթացի վերաբերյալ: Սակայն, ինչպես հայտնի է, նույնիսկ լեգիտիմ կառավարությունը կարող է չարաշահել իր իշխանությունը՝ վերահսկողության մեխանիզմների բացակայության դեպքում: Հետևաբար, արդար ընտրություններից հետո ՀԿ-ների դերը պետք է լինի կառավարության քաղաքական և հասարակական հաշվետվությունն ապահովելը:

Քաղաքական հաշվետվությունը սահմանվում է որպես «արդյունավետություն, որով կառավարվողները կարող են ազդեցություն ունենալ կառավարողների վրա: Թույլ հաշվետվության արդյունքը կարող է լինել այն, որ որոշումներն ընդունվեն նեղ քաղաքական և բյուրոկրատական շրջանակներում՝ դուրս թողնելով շահագրգիռ խմբերին և դրանց ներկայացուցիչներին» [2, pp. 38-39]: ՀԿ-ների դերն այս գործընթացում դիտորդի *(«watchdog»)* գործառույթն է, որի նպատակն է ի հայտ բերել իշխանության կողմից կատարված չարաշահումների դեպքերը և, հարկ եղած դեպքում, դիմել դատարաններ, վարչական կամ տվյալ դեպքերի համար նախատեսված հատուկ տրիբունալներ: Դ.Բրաուտիգամը հասարակական հաշվետվությունը սահմանում է որպես «մեթոդներ, որոնց միջոցով կառավարական և հասարակական ծառայություններից օգտվողներն ապահովում են հասարակական ծառայությունների համարժեք մակարդակ» [3, p. 12]: Մ.Ռոբինսոնն առանձնացնում է երկու մակարդակի հասարակական հաշվետվություն. միկրո և մակրո: Միկրո մակարդակի հաշվետվությունը կապված է հասարակական ծառայությունների որակի, արժեքի, վստահելիության և մատչելիության հետ: Այն ենթադրում է արտաքին ճնշում համապատասխան կառավարական գործակալությունների վրա, որպեսզի նրանց կողմից ընդունված որոշումները՝ կապված հասարակական ծառայություններին հատկացվող ծախսերի և բաշխումների հետ, լինեն ի նպաստ աղքատ և ընտրելու իրավունքից զուրկ բնակչության: Մակրո մակարդակի հաշվետվությունը վերաբերում է այն ձևերին, որոնց միջոցով հասարակական ծախսերի վերաբերյալ որոշումներն ընդունվում և, ինչպես տվյալ ծախսերը, վերահսկվում են արդյունավետ հաշվետվական համակարգերի և արտաքին աուդիտի միջոցով [2, p. 40]: «Արտաքին ճնշում»-ը ներառում է նաև ՀԿ-ների ազդեցությունը հասարակական ծառայությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու և հետագայում դրանք իրագործելու գործընթացի վրա: ՀԿ-ների այս դերը շատ կարևոր է, քանի որ դրանք ավելի մոտ են գտնվում հասարակությանը և ավելի լավատեղյակ են բնակչության իրական կարիքներին:

Այնուամենայնիվ, կառավարության որոշումների ընդունման գործընթացի վրա ազդելու համար առաջին հերթին պետք է ապահովել կառավարության բաց և թափանցիկ գործունեությունը: Այլապես տվյալ որոշումների և կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը թերի

կլինի կամ ընդհանրապես չի լինի: Քաղաքական առումով բաց լինելը նշանակում է «տեղեկատվության մատչելիություն», մանավանդ կառավարության տրամադրած տեղեկատվության և տնտեսական վիճակագրության ոլորտում: Այն նույնպես ներառում է խոսքի ազատություն՝ քննարկելու կառավարական որոշումները հատուկ շահառու խմբերի և լրատվական միջոցների կողմից: Թափանցիկությունը ենթադրում է հասարակական որոշումների ընդունման հստակ գործընթաց, որի արդյունքում հասարակությունը պետք է տեղեկատվություն ունենա կառավարության գործունեության մասին և ներգրավվի քաղաքականության մշակման գործընթացին [2, p. 41]: ՀԿ-ների դերը կառավարության բաց ու թափանցիկ գործունեությունն ապահովելու գործում կարող է իրականացվել բաց և թափանցիկ կառավարության հայեցակարգի վերաբերյալ հասարակությանը գիտելիքներ տալու և լրատվական միջոցների ներգրավմամբ ակցիաներ կազմակերպելու միջոցով: Ամենակարևորը, սակայն, ինֆորմացիայի ազատության մասին օրենքի ընդունումն է, որը կներառի բաց կառավարության հիմնական գծերն ընդգրկող հոդվածներ:

Սակայն նման օրենսդրությունը կարող է կառավարության բաց լինելու ապահովման արդյունավետ միջոց ծառայել միայն այն հասարակությունում, որտեղ գործում է օրենքի գերակայությունը: ՀԿ-ների տեսակետից՝ օրենքի գերակայությունը ծառայում է «քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը՝ ամեն գնով ապահովելով կառավարության հաշվետու լինելը [2, p. 27]: Հետևաբար, ՀԿ-ների, մանավանդ մարդու իրավունքներով զբաղվող ՀԿ-ների դերը (անհատներին իրենց իրավունքների մասին տեղեկություններ և խորհրդատվություններ, ինչպես նաև դատավարությունների ժամանակ նրանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելը) շատ կարևոր է: ՀԿ-ները կարևոր դերակատարություն ունեն նաև իրավական գործընթացի ժողովրդավարացման ապահովման գործում, որն իրականացվում է հատուկ փորձագիտական խմբերի միջոցով: Այս գործընթացի նպատակն է համապատասխանեցնել տվյալ երկրի օրենքները համընդհանուր միջազգային նորմերին:

ՀԿ-ները կարևոր են նաև ծառայությունների մատուցման ասպարեզում: Լինելով մոբիլ միավորներ՝ ՀԿ-ները որոշ ծառայություններ իրականացնելիս շատ դեպքերում ավելի արագ և արդյունավետ են գործում, քան պետական գործակալությունները: Կարևոր է ընդգծել, որ սա պետական կառուցվածքներին «փոխարինելու» փորձ չէ, այլ, ավելի շուտ, պետական քաղաքականության վրա ազդելու հնարավորություն: Օրինակ, նոր դեմոկրատացած երկրներում բավական շուտ նկատվեց այն փաստը, որ կառավարություններն ի վիճակի չեն բավարարել քաղաքացիների բոլոր կարիքնե-

րը: Շատ բնագավառներում բիզնես-սեկտորը նույնպես հետաքրքրված չէր, օրինակ, մարդկանց շրջակա միջավայրի հետ կապված հարցերի շուրջ կրթելու կամ աղքատներին իրավաբանական օգնություն տրամադրելու խնդիրներով: Հետևաբար, ՀԿ-ների դերն է օգնել մարդկանց մանավանդ այն բնագավառներում, որոնցով հետաքրքրված չեն կառավարությունը կամ բիզնեսը: Կառավարության և բիզնեսի կողմից հասարակության կարիքների բավարարման սահմանափակ հնարավորությունների պատճառ կարող են լինել ռեսուրսների և փորձի պակասությունը, պատասխանատվությունից խուսափելը կամ սոցիալական անտեղյակությունը:

ՀԿ-ները նպաստում են տնտեսության զարգացմանը նաև որպես գործատու: Օրինակ, Գերմանիայում *CARITAS* ընկերությունն ունի ավելի շատ աշխատողներ, քան արդյունաբերական կոնգլոմերատ *Siemens-ը,* իսկ ՀԿ ողջ սեկտորը 3 անգամ ավելի շատ աշխատողներ ունի, քան Դաշնային փոստը [4, p. 41]: Միայն նախկին սոցերկրներում է, որտեղ ՀԿ սեկտորը դեռ այդքան հզոր չէ, որ ՀԿ-ներն ունեն ավելի քիչ թվով աշխատողներ:

Անշուշտ, ՀԿ-ները նաև թույլ կողմեր ունեն, օրինակ՝ երկարաժամկետ խնդիրներ իրագործելու անբավարար ունակություն, անհրաժեշտ նախաձեռնությունների բացակայություն, բյուրոկրատացման վտանգ, կազմակերպությունների անվտանգությունը և կայունությունն ապահովված չեն և այլն [5, p. 4]: Սակայն այս թերությունները կարող են վերացվել պետական, բիզնես և ՀԿ սեկտորների միջև հավասարակշռված համագործակցության միջոցով:

Ամփոփելով՝ ընդգծենք այն մեծ ներուժը, որ ունեն ՀԿ-ները ժողովրդավարական կառավարման զարգացման գործում:

Մարտ, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Archer R.,* Markets and Good Government: The Way Forward for Economic and Social Development, NGLS, 1994.
2. *Robinson M.* (University of Sussex), Governance, Democracy and Conditionality: NGOs and the NewPolicy Agenda, in Governance, Democracy and Conditionality: What Role for NGOs?, ed Andrew Clayton, 1994.
3. *Brautigam D.,* Governance and Economy: A Review, The World Bank, 1991.
4. *Anheier H.K.,* An Elaborate Network: Profiling the Third Sector in Germany, in Government and the Third Sector, 1992.
5. *Potucek M.,* Not Only the Market4 CEU Press, Budapest, 1999.

РОЛЬ НЕПРАВИТЕЛЬСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ В РАЗВИТИИ ДЕМОКРАТИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ

Аргине Нагапетян

Резюме

Общепринято, что развитие демократического общества связано с развитием гражданского общества и функционированием специальных видов структур – неправительственных организаций. Есть различные определения для демократии. Например, « … уважение к правам человека, отношение к правам меньшинств, свобода слова, независимый законодательный орган, независимая судебная власть, справедливое распределение национального богатства, образование для всех и обязательства правительства для конституционного управления, право не согласиться и не бояться». Обсуждаются два главных признака демократии – плюрализм и ответственность. На основе представленных данных проведено суммирование главных признаков демократии: законное правительство (свободные, справедливые, прозрачные выборы), ответственность и открытость правительства, уважение закона, защита прав человека, сильное гражданское общество.